



Համարը N 148-Ն

Տիպը Որոշում

Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2005.03.09/17(389) Հոդ.286

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն

Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ

Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 19.03.2005

Տեսակը Հիմնական

Կարգավիճակը Գործում է

Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 03.02.2005

Ստորագրման ամսաթիվը 17.02.2005

Վավերացման ամսաթիվը 28.02.2005

Ուժը կորցնելու ամսաթիվը

☒ **Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N 347 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
28 փետրվարի 2005 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 փետրվարի 2005 թվականի N 148-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N 347 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման կարգը և դեղերի պետական գրանցման փորձաքննության վարձի չափերը հաստատելու մասին» N 347 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը՝

ա) որոշումը 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1¹-ին կետով.

«1¹. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ ձեռնարկել միջոցներ՝ տեղական դեղարտադրությունը պատշաճ արտադրական գործունեության պահանջներին համապատասխանեցնելու և արտադրության հետագա զարգացմանը նպաստելու համար, օգտագործել նաև տեղական դեղարտադրողների կողմից պետական գրանցման փորձաքննության համար վճարվող վարձավճարներից գոյացող զուտ շահույթի միջոցները».

բ) որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման փորձաքննության վարձի չափերի աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

NN ը/կ	Պետական գրանցման դեպքերը	Փորձաքննության վարձի չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը (հազ. դրամ)

1.	Վերաբաղում (ջեներիկ) դեղերի առաջին դեղաձև, դեղաչափ	900
	յուրաքանչյուր հաջորդ դեղաձև	450
	յուրաքանչյուր հաջորդ դեղաչափ	240
	յուրաքանչյուր նոր ցուցում	450
2.	Հայտնի դեղերի նոր գույքորդումներ	1200
3.	Նոր դեղանյութեր (նոր ակտիվ նյութեր) պարունակող դեղերի առաջին դեղաձև, դեղաչափ	2250
	յուրաքանչյուր հաջորդ դեղաձև, դեղաչափ	1200
4.	Հումեպաթային դեղերի առաջին դեղաձև, դեղաչափ	240
	յուրաքանչյուր հաջորդ դեղաձև, դեղաչափ և նոր ցուցում	60
5.	Բուսապատրաստուկներ, այլ բնական ծագում ունեցող պատրաստուկներ և կենսաբանական ակտիվ նյութեր պարունակող սննդային հավելումներ	240
6.	Պետական գրանցման հավաստագրի վերաձևակերպում՝ կապված արտադրանքի, արտադրող ֆիրմայի անվանման, փաթեթավորման և արտադրանքի անվտանգության, արդյունավետության ու որակի վրա չափող այլ փոփոխությունների հետ	24

Եթե Միևնույն Արտադրողի՝ Հայաստանի Հանրապետությունում Արդեն Պետական Գրանցում Ստացած Նույն Դեղն Արտադրվում Է Նաև Այլ Երկրներում, Ապա Յուրաքանչյուր Հաջորդ Երկրի Արտադրության Դեղի Պետական Գրանցման Ժամանակ Փորձաքննության Վարձը Գանձվում Է Սույն Աղյուսակում Հաստատված Վարձի Կեսի Չափով: 3. Սույն Որոշումն Ուժի Մեջ Է Մտնում Պաշտոնական Հրապարակման Օրվան Հաջորդող Տասներորդ Օրը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ա. Մարգարյան

2005 թ. փետրվարի 17
Երևան